Դրամաշնորհային հայտերի վերաբերյալ հայտադիմում

Ծրագիր՝ Ուժեղացնելով արևելյան հարևանության տոկունությունը (BREN)
Կարող են դիմել՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: *Նշում. ներառյալ՝ նոր կազմակերպություններ և BREN-ի նախկին գործընկերներ:*
Վերջնաժամկետը՝ 14 հուլիսի, 2023 թ.
Դրամաշնորհի չափը՝ մինչև 50,000
Հատկացվելիք դրամաշնորհների նախատեսված քանակը՝ 3
Ծրագրի գործողության ժամկետը՝ մինչև 7 ամիս (բոլոր ծրագրերը պետք է ավարտվեն մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը)

Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտը (ՊԽԼԻ) ընդունում է հայտադիմումներ Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններից՝ որպես Ուժեղացնելով արևելյան հարևանության կայունությունը (BREN) ծրագրի մաս:

BREN ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել կանանց և մարգինալացված խմբերի մարդկային անվտանգությունը Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Մոլդովայում քաղաքացիական հասարակության տոկունության ուժեղացման միջոցով:

Հայաստանում BREN-ն ունի հետևյալ թեմատիկ առաջնահերթությունները.

- **«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» (ԿԽԱ) օրակարգի առաջխաղացումը Հայաստանում.**
    - Հայաստանի համայնքապետարաններում և տեղական ինքնակառավարման մարմիններում ԿԽԱ ռազմավարության տեղայնացմանն ուղղված նախաձեռնություններ՝ ապահովելու գենդերային հավասարությունը և ԿԽԱ-ի իրավական բազայի իրականացումը տեղական մակարդակում:
    - ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի վերաբերյալ Հայաստանի Գործողությունների ազգային 2-րդ ծրագրի (ԳԱԾ) իրականացման և տեղական գործողությունների ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ աշխատանքներն ու նախաձեռնությունները (ՄԱԿ ԱԽ 1325 ԳԱԾ-ի վերաբերյալ):
    - Իրազեկության բարձրացման, ցանցային համագործակցության, գործընկերության և փորձի փոխանակման միջոցառումներ, որոնք

ուղղված են քաղաքացիական հասարակության, տեղական ինքնակառավարման մարմինների և նախարարությունների միջև համագործակցության զարգացմանը՝ միտված Հայաստանում ԿԽԱ օրակարգն առաջ մղելուն և ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի տեղայնացմանը՝ կենտրոնանալով սահմանամերձ շրջանների վրա:

- Նախաձեռնություններ՝ ուղղված որոշումների կայացման, խաղաղության պահպանման և անվտանգության պլանավորման գործընթացներում կանանց մասնակցության մեծացմանը:
- Գործողություններ՝ ուղղված ոստիկանությունում, բանակում, որոշումներ կայացնող և այլ կառույցներում կանանց իրավունքների պաշտպանությանը:
- ԿԽԱ օրակարգում գրավոր նյութերի և տեսալսողական նյութերի արտադրություն, որը հանգեցնում է գիտելիքների, վերաբերմունքի և վարքագծի փոփոխությունների:

- **Տարբեր խմբերի (փոքրամասնություններ, հաշմանդամություն ունեցող անձինք և այլք) ներգրավվածության ավելացում Հայաստանում խաղաղության և անվտանգության շուրջ քննարկումների և որոշումների կայացման մեջ.**
  - Ծրագրեր և նախաձեռնություններ սոցիալ-հոգեբանական աջակցության և տրավմաների բուժման վերաբերյալ՝ հատկապես հակամարտությունից տուժած կանանց և սահմանամերձ շրջաններում գտնվող համայնքների համար:
  - Նախաձեռնություններ և գործողություններ, որոնք կենտրոնացած են մարդկային անվտանգության և դրական խաղաղության վրա՝ ընդգծելով կանանց կարևոր դերը երկարատև խաղաղության և անվտանգության ապահովման գործում:
  - Լրագրողների համար իրազեկության բարձրացման և կարողությունների զարգացման նախաձեռնություններ փաստահեն և ԿԽԱ-ին առնչվող լուսաբանումների վերաբերյալ:
  - ՁԼՄ-ների կողմից իրականացվող գործողություններ, ինչպիսիք են խաղաղության և հակամարտությունների վերաբերյալ բանավեճերը, որոնք ԿԽԱ օրակարգը տարբեր տեսանկյուններից քննարկելու ավելի լայն հնարավորություններ են ընձեռում, ինչը հանգեցնում է գիտելիքների, վերաբերմունքի և վարքագծի փոփոխությունների:
  - Իրազեկության բարձրացման նախաձեռնություններ, որոնք վիճարկում են կանանց, կին իրավապաշտպանների և այլ ակտիվիստների աշխատանքի շուրջ ձևավորված բացասական կարծրատիպերը:

Ի գիտություն. այս դրամաշնորհային հայտին կարող են դիմել ինչպես BREN ծրագրի շրջանակներում նախկինում աջակցություն չստացած նոր

կազմակերպությունները, այնպես էլ նախկին դրամաշնորհառուները: BREN ծրագրի շրջանակներում նախկինում աջակություն ստացած գործընկերները կամ նրանք, ովքեր դիմել են BREN ֆինանսավորման այլ հնարավորություններից օգտվելու համար, կարող են հայտադիմում ներկայացնել: Այնուամենայնիվ, խնդրում ենք նկատի ունենալ, որ 2023 թվականի ընթացքում յուրաքանչյուր կազմակերպության կտրամադրվի առավելագույնը մեկ դրամաշնորհ:

Պահանջներ

Հայտադիմումներ կարող են ներկայացնել Հայաստանում գրանցված բոլոր քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Հետաքրքրված հայտադիմումատուները պետք է համապատասխանեն վերոնշյալ թեմատիկ առաջնահերթություններին:

Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտը (ՊԽԼԻ) կարող է ֆինանսավորել այն գործողությունները, որոնք ուղղված են.

- Նյութերի արտադրությանը. օրինակ՝ ծրագրի խնդիրներից բխող հետազոտություն, կրթական, գովազդային կամ մեդիա բովանդակության արտադրություն:
- Շահերի պաշտպանությանը. օրինակ՝ շահերի պաշտպանությանը միտված գործողություններ՝ ուղղված կառավարությանը, տեղական ինքնակառավարմանը, համայնքային կառույցներին, ինչպիսիք են կրթական և կրոնական հաստատությունները:
- Համայնքային աշխատանքներին. գործողություններ, որոնք ուղղված են խոցելի համայնքների՝ հատկապես կանանց, էթնիկ և կրոնական փոքրամասնությունների, ներքին տեղահանված անձանց, փախստականների և այլոց գիտելիքների և հմտությունների բարձրացմանը:
- Կարողությունների զարգացմանը. հատկորոշված թեմատիկ ոլորտներում կարողությունների զարգացման աջակցություն տրամադրող միջոցառումներ նախատեսված շահառուների, գործընկեր կազմակերպությունների կամ այլ շահակիցների համար:
- Ցանցային համագործակցությանը. գործողություններ, որոնք աջակցում են հատկորոշված թեմատիկ ոլորտներում աշխատող խմբերի կամ անհատների միջև համագործակցությանը, ներառյալ՝ ռեսուրսների և ջանքերի փոխանակումը, որը հիմք է հանդիսանում տարբեր խմբերի/անհատների միջև փոփոխություններ կատարելու կամ խթանելու համար:

Առաջարկվող ծրագրի առավելագույն տևողությունը չպետք է գերազանցի 7 ամիսը: Բոլոր ծրագրերը պետք է ավարտվեն մինչև 2024 թվականի փետրվարի 29-ը: Ծրագրերի համար առաջարկվող բյուջեն կազմում է 20.000 - 50.000 ֆունտ ստերլինգ (GBP):

Առավելություն է տրվում հետևյալ խմբերից ստացված հայտադիմումներին.

- կանանց և/կամ երիտասարդների կողմից ղեկավարվող կազմակերպություններ,
- ներքին տեղահանված անձանց, էթնիկ, կրոնական և այլ փոքրամասնությունների կողմից ղեկավարվող կազմակերպություններ,
- մայրաքաղաքից դուրս՝ հատկապես սահմանամերձ շրջաններում գործունեություն ծավալող կազմակերպություններ,
- նոր ձևավորված կազմակերպություններ:

Այս մրցույթը նպատակ ունի հեշտացնելու կազմակերպությունների միջև գործընկերությունը, հետևաբար առավելություն է տրվում համատեղ հայտադիմումներին՝ հատկապես հետևյալ համակցություններով.

- մայրաքաղաքում և մայրաքաղաքից դուրս գործող կազմակերպություններ,
- հմտությունների տարբեր շրջանակներ ունեցող կազմակերպություններ,
- լրատվամիջոցների հետ համագործակցող ՔՀԿ-ներ,
- մեծամասնությունների և փոքրամասնությունների կողմից ղեկավարվող կազմակերպություններ,
- կազմակերպություններ՝ BREN-ի անդամ տարբեր երկրներից: Եթե կազմակերպությունը ցանկանում է հայտադիմում ներկայացնել մեկ այլ երկրի կազմակերպության հետ համատեղ, ՊԽԼԻ-ն կաջակցի համապատասխան գործընկերներ գտնելու հարցում: Խնդրում ենք աջակցության համար դիմել ՊԽԼԻ ծրագրի հայաստանյան մասի համակարգող Քնարիկ Մկրտչյանին հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ knarik@iwpr.net, մինչև 2023թ. հունիսի 30-ը:

Հավանական հայտադիմումատուները պետք է ունենան.

- հարգանք գենդերային հավասարության և բազմազանության նկատմամբ,
- զգայունություն հակամարտությունների և գենդերային հարցերի առումով,
- ռիսկերը հատկորոշելու, վերլուծելու և մեղմացնելու ունակություն,
- ծրագրի կառավարման թափանցիկություն և հաշվետվողականություն՝ ներառյալ ֆինանսների կառավարման հմտություններ,
- սովորելու և փորձն այլ դրամաշնորհառուների հետ կիսելու պատրաստակամություն,
- դրամաշնորհի շրջանակներում սկսած աշխատանքը շարունակելու կայունության ծրագիր:

Այս մրցույթը կազմում է ավելի լայն BREN ծրագրի մասը: Հայտադիմումատուներին խորհուրդ կտրվի մասնակցել փորձի փոխանակման և կարողությունների զարգացման ազգային և տարածաշրջանային գործունեությանը, ներառյալ՝ կիբերանվտանգության և ռազմավարական հաղորդակցության, պաշտպանության (safeguarding) ոլորտներում:

Ծրագրի առաջին երկու շաբաթվա ընթացքում ֆինանսավորում ստացող բոլոր անձինք կենթարկվեն կազմակերպչական և կայունության կարիքների գնահատման: Այս կարիքների գնահատումը տեղեկություն կտրամադրի կազմակերպչական կարողությունների զարգացման անհատական գործողությունների վերաբերյալ: Բոլոր ֆինանսավորում ստացողներին խորհուրդ է տրվում մասնակցել անհատականացված կարողությունների զարգացմանը, կայունության կարիքների գնահատմանը և գործողություններին:

Գնահատում

Հայտադիմումների գնահատումը կանցկացվի երկու փուլով: Առաջին փուլում լավագույն հայտադիմումները կառանձնացվեն ՊԽԼԻ-ի կողմից՝ 10 բալանոց սանդղակով:

Գնահատում	**Միավորներ**
Հայտադիմումը հստակ է և մանրամասն, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն առկա են, իսկ առաջարկվող ծրագիրն ակնհայտորեն համահունչ է BREN ծրագրի թեմատիկ առաջնահերթություններին:	8-10 միավոր
Հայտադիմումը հիմնականում պարզ է և պարունակում է բավարար տեղեկատվություն, հիմնական փաստաթղթերի մեծ մասն առկա է, իսկ առաջարկվող ծրագիրը հիմնականում համահունչ է BREN ծրագրի թեմատիկ առաջնահերթություններին:	5-7 միավոր

Հայտադիմումն անհասկանալի է, կամ բացակայում են փաստաթղթերը, կամ էլ թեմատիկ կենտրոնացումը չի համապատասխանում BREN ծրագրի թեմատիկ առաջնահերթություններին:	1-4 միավոր

Լավագույն հայտադիմումների առանձնացման փուլում ՊԽԼԻ-ն կարող է պարզաբանումներ պահանջել կազմակերպություններից: Առնվազն 5 միավոր ստացած առաջարկները կներկայացվեն ընտրող հանձնաժողովին՝ ամբողջական դիտարկման համար:

Վերջնական ընտրություն

Ընտրող հանձնաժողովը, որը բաղկացած է ՊԽԼԻ-ի և Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատան ներկայացուցիչներից, կգնահատի հայտադիմումները՝ հիմնվելով ստորև բերված աղյուսակում նկարագրված չափանիշների վրա: Ֆինանսավորման համար կընտրվեն ամենաբարձր միավորներ ստացած հայտադիմումատուները: Ֆինանսավորումը կախված կլինի ստուգման գործընթացներից:

Հ/Հ	Չափանիշ	Առավելագույն միավորներ
1.	**Մրցույթի նպատակներին համապատասխան արձագանք** Ծրագրի նախագիծը համապատասխանում է սույն մրցույթի նպատակներին և առաջարկում է համապատասխան լուծումներ Հայաստանում առկա մարտահրավերներին: Այն հիմնված է առաջարկվող թեմատիկ ոլորտների վրա և իր ներդրումն է ունենում դրանցում:	30
2.	**Տեխնիկական մոտեցում** Առաջարկվող ծրագրի նախագիծը ներկայացնում է իրավիճակի հստակ վերլուծություն, հատկորոշում է ծրագրի հստակ նպատակները, վերջնարդյունքները և	30

	գործողությունները, որոնք համապատասխան են միմյանց: Ծրագիրը կարող է իրականացվել չափավոր ռիսկերով:	
3.	**Կազմակերպչական կայունություն** Ծրագիրը ցույց է տալիս, որ ծրագրի իրականացումը բխում է կազմակերպության շահերից և կօգնի կազմակերպությանը դառնալ ավելի կայուն:	20
4.	**Ծախսերի գնահատում** Ծրագրի բյուջեն հստակ է և համապատասխանում է տեխնիկական մոտեցմանը: Ներառված ծախսերը խելամիտ են և անհրաժեշտ են ծրագրի նպատակներին հասնելու համար:	20
Տեխնիկական առավելագույն ընդհանուր միավոր՝		100

Հայտադիմումների ընդունման գործընթաց

Հետաքրքրված կազմակերպությունները կարող են լրացված հայտադիմումը և բյուջեի ձևաթուղթը ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ iwpr-en@iwpr.net.

Հայտադիմումները կարող են ներկայացվել հայերենով կամ անգլերենով: Նախընտրելի լեզուն անգլերենն է, այնուամենայնիվ, հայտադիմումի լեզուն չի ազդի դրամաշնորհի հատկացման վերաբերյալ որոշման վրա:

Հարցերի դեպքում կարող եք դիմել Քնարիկ Մկրտչյանին հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ knarik@iwpr.net

ՊԽԼԻ-ի աշխատակիցները կպատասխանեն Ձեր հարցերին մինչև 2023 թվականի հուլիսի 10-ը:

Այս դրամաշնորհային մրցույթի մասին տեղեկատվական հանդիպումը տեղի կունենա 2023 թվականի հունիսի 27-ին Zoom հարթակում Երևանի ժամանակով ժամը 11:00-ին: Հետաքրքրված կազմակերպությունները հանդիպմանը մասնակցելու համար կարող են գրանցվել այստեղ:

ՊԽԼԻ-ի մասին

Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտը (iwpr.net) շահույթ չհետապնդող միջազգային կազմակերպություն է, որի գլխավոր գրասենյակները գտնվում են Լոնդոնում և Վաշինգտոնում: ՊԽԼԻ-ն խաղաղություն և ժողովրդավարություն է ստեղծում ազատ և անաչառ լրատվամիջոցների օգնությամբ: Այն ուժեղացնում է տեղական լրատվամիջոցները հակամարտությունների և փոփոխությունների առաջնագծում՝ աշխատելով աշխարհի 3 տասնյակ երկրներում և տարածաշրջաններում: Այն ներառում է անկախ տեղական լրատվամիջոցների ստեղծում, տեղական լրագրողների, խմբագիրների և պրոդյուսերների պատրաստում, մարդու իրավունքների, արդյունավետ կառավարման և հարակից հարցերի վերաբերյալ լայնածավալ խորը լուսաբանման աջակցություն, զարգացող երկրներում և միջազգային մակարդակով մասնագիտական լուսաբանման տարածում, ինչպես նաև տվյալ տարածաշրջանում մարդու իրավունքների, միջազգային արդարադատության և կանանց կազմակերպությունների հաղորդակցման կարողությունների ամրապնդում:

BREN-ի մասին

Ուժեղացնելով արևելյան հարևանության կայունությունը (BREN) ծրագիրն աջակցվում է Միացյալ Թագավորության Կոնֆլիկտների, կայունության և անվտանգության հիմնադրամի կողմից և իրականացվում է Պատերազմի և

խաղաղության լուսաբանման ինստիտուտի (ՊԽԼԻ) կողմից՝ Կին խաղաղարարների համաշխարհային ցանցի (GNWP) հետ համագործակցությամբ։

BREN ծրագիրը նպաստում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) խաղաղության և անվտանգության ոլորտում տրանսֆորմացիոն փոփոխություններ իրականացնելուն Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Մոլդովայում՝ կանանց, ինչպես նաև մարգինալացված, խոցելի ու սոցիալապես բացառված խմբերի շրջանում մարդկային անվտանգությունը բարելավելու նպատակով։